զի ոչ ունէր անձնական դրամ․ դիտումն Պօղոսի էր առնել ամէն նման ամենայն միաբանից, բայց նոքա յառաջագոյն մերկացեալ էին, բաց յոմանց։ Մինչեւ ցայսօր ոմանք ստութեամբ յերիւրեն թէ Պօղոս բացեալ իցէ զսնտեակս միաբանից և դատարկեալ զնոսա, և այս առեն յաւէտ 'ի նպաստ ընչաքաղց ագահութեան և անխիղճ բռնաւորութեան իւրեանց․ զի այրն հաւատարիմ երբէք չէ արարեալ զայդպիսի տարօրինակ գործս։ Եւ զի կարի դժուարին երեւէր 'ի սմին ժամանակի ազատութիւն Աթոռոյն, զի յամենայն կողմանց հնչէին ձայն պատերազմաց, հարկապահանջութեանց, տառապանաց և նեղութեանց, և չլինէր յաջողութիւն գնալ ուխտաւորաց յԵրուսաղէմ։ Պօղոս եպիսկոպոս մինչդեռ էր յԵգիպտոս՝ կամեցաւ տանել ընդ իւր զԿիւրակոս եպիսկոպոս 'ի Ս․ Աթոռն իբր օգնական ինքեան, այլ ժողովուրդ տեղւոյն ոչ թողին զայն, եւ նա մեկնեցաւ անտի իւրովքն հանդերձ ('ի 15 Նոյեմբերի), և եհաս յԵրուսաղէմ (1828․ յ3 Դեկտեմբերի) և ետես զի պաշարեալ էր բոց նեղութեան եւ տառապանաց, եւ առ տագնապ սրտին և 'ի տաժանմանց երկար ճանապարհաց, անկաւ խօթ 'ի մահիճս․ եկին առ նա Գլխաւորք քաղաքին և խնդրէին 'ի նմանէ ընծայս, կարծելով զնա Պատրիարք Երուսաղէմի, և իբրեւ ծանեան թէ չէ՝ դարձուցին զբանս իւրեանց, թէ երբեմն լեալ է Պատրիարք 'ի թագաւորեալ քաղաքի․ ապա ասէ՝ չունիմ ինչ տալ ձեզ, եթէ վասն իմ են բանք ձեր, ելանեմ յԵրուսաղէմէ։ Ապա առաքեաց զհրովարտակն ընդ Կարապետ եպիսկոպոսի 'ի Դամասկոս առ Կուսակալն՝ բերել անտի գիր հրամանի։ Եւ նորա սիրով ընկալեալ զնա եցոյց գութ եւ խնամ, եւ գրեաց առ Քաղաքապետն և առ դատաւորն Երուսաղէմի ըստ մտաց հրովարտակին (Պույուրուլտը), և խոստացաւ լինել ձեռնտու 'ի գործս Աթոռոյն, եթէ գտցին հաւատարիմ 'ի բանս իւրեանց, զի կարի ատելի էր նմա ստախօսութիւն, այսինքն, զի մի յետս դարձցի փոխանագիր նորին 'ի Կոստանդնուպօլսոյ, զի զհարկ տարւոյն այնորիկ սահմանեալ էին անդ վճարել, և սոքա թախանձանօք գրեցին առ Զաքարիա վարդապետ լինել արթուն և զգոյշ, եւ հայկազն Յովհաննէս․ որ էր առ Բդեշխին 'ի Դամասկոս ձեռնտու